

Ճ Շ Տ Ո Ւ Մ

«Բազմավէպ»ի 1996ի թիւին մէջ լոյս տեսած յօդուածէս (որ կը կրէր «Ամերիկայի Հայագիտական Մամուլը՝ Պատմական ակնարկ» վերտառութիւնը, որ 1995ի Սեպտեմբերին կարդացուած էր «Բազմավէպ»ի 150ամեակին առթիւ Վենետիկի մէջ կայացած գիտաժողովին գուրս մնացած էր բացատրութիւնը «Annual of Armenian Linguistics» տարեգիրքի մասին։ Սոյն նըշ-մարով կ'ուզեմ ուղղել հարցը։

Վերոնշեալ պարբերականը կը հրատարակուի Ohioի Նախանգային Համալսարանի Clevelandի Մասնաճիւղին կողմէ, «Ալեքս Մանուկեան մշակութային հիմնադրամ»ի մասնակի յատկացումով։ Անոր խմբագիրն է ականաւոր հայագէտ John Greppin։ Հայագիտական տարեգիրքի խմբագրական կազմին կը մասնակցին հանրայայտ ակադեմականներ՝ Giancarlo Bolognesi, Eric Hamp; Rudiger Schmit, J.J.S. Weitenberg եւ հայրենի գիտնականներ Կիւ։ Ճահուկեան եւ Ամալիա Խաչատրեան։

Ցարդ տարեգիրքէն լոյս տեսած են 19 համարներ։

ԿԱՐՈ ՄՈՄՃԵԱՆ